ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/58

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.05.2018թ. թիվ 03/26-3/9176-18 գրությամբ «Աննա 80» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.05.2018թ. թիվ 03/17/1317-18 գրության հիման վրա, 23.05.2018թ. «Աննա 80» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն 16.05.2018թ. թիվ 03/17/1317-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կարիքների համար 23.04.2018թ. կազմակերպված ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ից 6-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել՝ «Աննա 80» ՍՊԸ-ն: Սահմանված կարգով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.04.2018թ. թիվ 3 որոշմամբ «Աննա 80» ՍՊԸ-ին առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելվածներ 5, 5.1 և 5.2): 04.05.2018թ. «Աննա 80» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, որոնք չեն համապատասխանել հրավերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը 04.05.2018թ. թիվ 4 որոշմամբ առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի (այդ թվում 04.05.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ պահանջված և ընկերության կողմից 05.05.2018թ. ներկայացված լրացուցիչ փաստաթղթերի) ուսումնասիրության արդյունքում «Աննա 80» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշներին չհամապատասխանելու հիմքով:»:

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն կոմիտեի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Աննա 80» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Աննա 80» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.05.2018թ. թիվ 03/26-3/9176-18 գրությամբ

նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 23.05.2018թ. թիվ 03/26-3/9176-18 գրությունը, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի 16.05.2018թ. թիվ 03/17/1317-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 27.04.2018թ. նիստի թիվ 3, 04.05.2018թ. նիստի թիվ 4 և 05.05.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությունները.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արմավիրի մարզում նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Աննա 80» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված

կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 27.04.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 1-ին կետով որոշել է ընթացակարգի 1-ից 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Աննա 80» ՍՊԸ-ին:

- 2-րդ կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցին՝ առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելված 5, Հավելված 5.1 և Հավելված 5.2):

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 27.04.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Աննա 80» ՍՊԸ-ն ծանուցվել է:

Հանձնաժողովը 04.05.2018թ. կայացած նիստին թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան հաջորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագրի պահանջի բավարարման համար՝ ներկայացված 4 պայմանագրերից երեքը չեն կարող համարվել նմանատիպ, իսկ «ԵՔԲԸԱԾՁԲ-17/70» ծածկագրով պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտը, հանձնման-ընդունման արձանագրությունները և հաշիվ ապրանքագրերը ամբողջական չեն,

2. Կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ընթակա տեխնիկական միջոցների տվյալները և քանակը չեն համապատասխանում Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 2-րդ ենթակետի պահանջներին (ներկայացված հորատող մեքենայի տեխնիկական տվյալները չեն համապատասխանում, և ներկայացված չեն կոմպրեսոր և եռակցող ապարատների վերաբերյալ տվյալներ),

3. Ներկայացված մասնագետների որակավորումը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով պահանջվող պայմանագրի կատարման համար ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի պահանջներին:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ից 6-րդ չափաբաժինների համար «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերը լիարժեք գնահատելու համար, առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 05.05.2018թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով՝ «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի (այդ թվում 04.05.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ 4 պահանջված և Ընկերության կողմից 05.05.2018թ. ներկայացված լրացուցիչ փաստաթղթերի) ուսումնասիրության արդյունքում որոշել է, որ «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին մասնավորապես՝

1. Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան հաջորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագրի պահանջի բավարարման համար՝ ներկայացված 4 պայմանագրերից երեքը չեն կարող համարվել նմանատիպ, իսկ «ԵՔԲԸԱԾՁԲ-17/70» ծածկագրով պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտը,

2. Կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ընթակա տեխնիկական միջոցների տվյալները և քանակը չեն համապատասխանում Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 2-րդ ենթակետի պահանջներին (ներկայացված հորատող մեքենայի տեխնիկական տվյալները չեն համապատասխանում, և ներկայացված չեն կոմպրեսոր և եռակցող ապարատների վերաբերյալ տվյալներ),

3. Ներկայացված մասնագետների որակավորումը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով պահանջվող պայմանագրի կատարման համար ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի պահանջներին:

Հանձնաժողովը նույն արձանագրության 2-րդ կետով որոշել է մերժել «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով

հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշներին անհամապատասխանության հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ նաև Օրենք)

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ ԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/1-Ա ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 7.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

- 7.10 կետի համաձայն՝ եթե նույն հրավերի 7.9 կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Հանձնաժողովը 04.05.2018թ. կայացած նիստին թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան հաջորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագրի պահանջի բավարարման համար՝ ներկայացված 4 պայմանագրերից երեքը չեն կարող համարվել նմանատիպ, իսկ «ԵՔԲԸԱԾՁԲ-17/70» ծածկագրով պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտը, հանձնման-ընդունման արձանագրությունները և հաշիվ ապրանքագրերը ամբողջական չեն,

2. Կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ընթակա տեխնիկական միջոցների տվյալները և քանակը չեն համապատասխանում Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 2-րդ ենթակետի պահանջներին (ներկայացված հորատող մեքենայի տեխնիկական տվյալները չեն համապատասխանում, և ներկայացված չեն կոմպրեսոր և եռակցող ապարատների վերաբերյալ տվյալներ),

3. Ներկայացված մասնագետների որակավորումը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով պահանջվող պայմանագրի կատարման համար ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի պահանջներին:

- Հանձնաժողովը որոշել է «Աննա 80» ՍՊԸ-ին առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, սակայն նշված անհամապատասխանությունները վերջինիս կողմից չեն շտկվել, որի արդյունքում «Աննա 80» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելով, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.05.2018թ. թիվ 03/26-3/9176-18 գրությամբ «Աննա 80» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Աննա 80» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ